



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒՄԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 սեպտեմբերի 2011թ. թիվ 272-Ա

Կ.ԱՆՏՈՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 109 հոդվածի 3-րդ ենթակետի, 112 և 130 հոդվածների, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետով, 16-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հաշվի առնելով Կ.Անտոնյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ եմ.

1. «Ղուրսալի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Կարեն Արծրունի Անտոնյանին ազատել զբաղեցրած պաշտոնից՝ լուծելով 2009թ. սեպտեմբերի 18-ին նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «Ղուրսալի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրինությանը՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Կարեն Արծրունի Անտոնյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

ՀՀ ԼՈՒՈՒՄԻ ՄԱՐԶՊԵՏ

2011թ. սեպտեմբերի 30
ք.Վանաձոր

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ